ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«29» «մարտի» 2023թ. N 47-Ա

ՀՐԱՄԱՆ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 67-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի N 172-Լ հրամանի 18-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Անտառային կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 8-ի «Անտառային կոմիտեի հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության համակարգումը վերապահելու և անտառային կոմիտեի նախագահի 2020 թվականի նոյեմբերի 23-ի N 76-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 67-Ա հրամանի N 1 հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում «գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Է. Սեինյան» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյան» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

29.03.2023

X

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Подписано: KIRAKOSYAN VLADIMIR 1104840278

Վ. Կիրակոսյան

«__29__» «մարտի» 2023թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

«08» «հոկտեմբեր» 2022թ. ք.Երևան

ՀՐԱՄԱՆ N 67-Ա

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 76-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդված 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Անտառային կոմիտեի հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության համակարգումը՝ համաձայն հավելված N 1-ի.

2. Հաստատել Անտառային կոմիտեի նախագահի, նախագահի 1-ին տեղակալի, նախագահի տեղակալի, գլխավոր քարտուղարի միջև պարտականությունների սխեմատիկ բաշխումն ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության համակարգման՝ համաձայն հավելված N 2-ի.

3. Ուժը կորցրած ճանաչել Անտառային կոմիտեի նախագահի 2020 թվականի նոյեմբերի 23-ի «Անտառային կոմիտեի հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության համակարգման մասին» N 76-Ա հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Expired certificate

X

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Նախագահ՝ Signed by: KIRAKOSYAN VLADIMIR 1104840278

Վլադիմիր Կիրակոսյան

« 08 » հուլիսի 2022թ.
ք.Երևան

Հավելված N 2
Անտառային կոմիտեի նախագահի
2022 թվականի հուլիսի 8-ի N 67-Ա հրամանի



Հավելված N 1
Անտառային կոմիտեի նախագահի
2022 թվականի հուլիսի 8-ի N 67-Ա
հրամանի

Անտառային կոմիտեի հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության համակարգումը

1. Սույն հավելվածով սահմանվում է Անտառային կոմիտեի հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հետևյալ համակարգումը՝

1) անտառային կոմիտեի նախագահ Վ.Կիրակոսյան՝

ա) արտաքին կապերի բաժին,

բ) «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) անտառային կոմիտեի նախագահի 1-ին տեղակալ Ս.Աթանեսյան՝

ա) իրավաբանական վարչություն,

բ) պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հսկողության վարչություն,

գ) գնումների բաժին.

3) անտառային կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Սիրադեղյան՝

ա) անտառների և անտառային հողերի կառավարման վարչություն,

բ) անտառների հաշվառման և կադաստրի վարման վարչություն.

4) անտառային կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Է. Սեինյան՝

ա) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն,

բ) անձնակազմի կառավարման բաժին,

գ) ընդհանուր բաժին,

դ) տնտեսական բաժին